Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1537-Լ որոշման

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԵՆԻ ԵՎ ՈՍԿԵՀԱՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԽԱՂՈՂԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. 2025 թվականի Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) նպատակն է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում 2025 թվականին տնտեսությունների կողմից արտադրված Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի իրացման գործընթացին աջակցելու նպատակով սուբսիդավորել առնվազն 700 տոննա և ավելի քանակությամբ Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին:

2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2. Միջոցառման մասնակիցներն են՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն).

2) Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը.

3) առնվազն 700 տոննա և ավելի քանակությամբ Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտները:

3. Միջոցառման իմաստով շահառու են համարվում խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին խաղող մատակարարող տնտեսությունները (այսուհետ՝ շահառու), որոնք Վայոց ձորի մարզում զբաղվում են Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի արտադրությամբ:

4. Միջոցառման իմաստով տնտեսավարող սուբյեկտներ են համարվում Հայաստանի Հանրապետության մարզերում խաղողի մթերման գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ),

որոնց նկատմամբ միջոցառման 6-րդ կետում նշված դիմումի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում չի կայացվել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մեկ միլիոն դրամ և ավելի հարկային պարտավորությունների մասով գանձման որոշում կամ որոնք միջոցառման 6-րդ կետում նշված դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ չունեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

5. 2025 թվականին խաղող մթերող տնտեսավարող սուբյեկտներին Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի մթերման համար սուբսիդավորման տրամադրման պայմանները հետևյալն են՝

1) Վայոց ձորի մարզից առնվազն 700 տոննա և ավելի քանակությունը նվազագույնը 220 դրամով մթերված Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի ամբողջ ծավալի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար տրամադրվում է 70 դրամի չափով սուբսիդավորում.

2) սուբսիդավորում չի տրամադրվում՝

ա. տնտեսավարող սուբյեկտին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող կամ հիմնադիր կամ բաժնետեր հանդիսացող անձանց կամ նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) կողմից մշակվող հողատարածքներից մթերվող (գնվող) խաղողի համար,

բ. այլ տնտեսավարող սուբյեկտին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող կամ հիմնադիր կամ բաժնետեր հանդիսացող անձանց կամ նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) կողմից մշակվող հողատարածքներից մթերվող (գնվող) խաղողի համար.

3) առնվազն 700 տոննա և ավելի քանակությամբ մթերումը հաշվարկվում է առանց սույն կետի 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերություններում նշված մթերվող խաղողի քանակության:

6. Միջոցառման շրջանակներում սուբսիդավորում ստանալու համար տնտեսավարող սուբյեկտն էլեկտրոնային կամ թղթային տարբերակով (գրությամբ) դիմում է նախարարություն՝ համագործակցության համաձայնագիր կնքելու նպատակով:

7. Նախարարության և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքվող համագործակցության համաձայնագրում նշվում է նաև, որ մթերվող խաղողի 1 կգ-ի նվազագույն գինը կազմում է 220 դրամ:

8. Համագործակցության համաձայնագիրը ստորագրելուց հետո նախարարությունը համաձայնագրի պատճենը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տվյալ տնտեսավարող սուբյեկտի մթերման կետի տեղակայման վայրի մարզպետի աշխատակազմ, որին կցվում է ընթացակարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տնտեսավարողի կողմից տրամադրված տեղեկատվությունը:

9. Մշտադիտարկումն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտի մթերման կետի տեղակայման վայրի մարզպետի աշխատակազմի աշխատակիցների կողմից՝ մթերման ամբողջ գործընթացի ընթացքում ֆիզիկապես ներկա լինելու, գործընթացը դիտարկելու և 2025 թվականի Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառման շրջանակներում տնտեսավարող սուբյեկտներին սուբսիդավորման տրամադրման ընթացակարգով սահմանված մթերվող խաղողի փաստացի ծավալներն արձանագրելու եղանակով:

10. Միջոցառման շրջանակներում 2025 թվականին խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն ապահովում են մթերման գործընթացի թափանցիկությունը, Վայոց ձորի մարզից մթերվող Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի քանակների փաստաթղթավորումը և տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև ապահովում են մշտադիտարկում իրականացնող անձանց ազատ մուտքը մթերման կետեր, դրանցում տեղակայված կշռման տարածքներ և վերջիններիս պահանջով մթերման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության տրամադրումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ